ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **16/02/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4/2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Ատոմ Բադալյանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Նորայր Միքայելյանը, Պավել Ցուգունյանը, Գուրգեն Օսիպյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Աննա Զոբանյանը, Արա Սիմոնյանը, Եղիշե Ավետիսյանը, Անուշ Ծատուրյանը, Ջանինա Սարգսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 16-ի չորրորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի հետևյալ օրակարգը.
1) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 191-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
2) Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացումներ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին.

3) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 197-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի N 144-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին.
4) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 198-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
5) «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկը Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու և անվանափոխելու մասին.
6) Աբովյան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.
7) Արսեն Հակոբյանին պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին.
8) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող 07-023-0193-0007 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող 0.67373 հեկտար մակերեսով հողամասն առանց մրցույթի վարձակալությամբ տրամադրելու մասին.
10) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի թիվ 78/1 հասցեում գտնվող հողամասը Սևակ Հովհաննիսյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
11) Բալահովիտ համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 16-ի N 27-Ա որոշմանը հավանություն տալու մասին.
12) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
13) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա օրինականացված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
14) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին.
15) Աբովյան համայնքի ավագանու մի շարք որոշումներ մասնակի անվավեր ճանաչելու մասին.
16) Քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց պատկանող շինություններով ծանրաբեռնված հողամասերն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
17) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող 07-011-0214-0009 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
18) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող 07-011-0214-0010 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
19) Աբովյան համայնքի Առինջ գյուղում գտնվող 07-011-0214-0011 կադաստրային ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
20) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 3 շենքի թիվ 2 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
21) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7 շենքի թիվ 12 սենյակն ուղղակի վաճառքով օտարելու մասին.

22) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամասի 4/1/1 շենքի թիվ 323 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
23) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Տրանսճանշին հանրակացարանի թիվ 103 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
24) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամասի 4/2 շենքի թիվ 131 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
25) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամասի 4/1/1 շենքի թիվ 102 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
26) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի 7 շենքի թիվ 44 սենյակն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
27) Գևորգ Սաֆարյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
28) Գեղամ Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակելուն համաձայնություն տալու մասին.
29) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 11-րդ, 13-րդ, 20-րդ, 27-րդ և 28-րդ ենթակետերը հանել օրակարգից: Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 07-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 191-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքում տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանելու մասին» N 191-Ն որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տ. Գեղամյանը հարցրեց, թե ինչու՞ այս հարցը չի քննարկվել «Իրավական հարցերի» մշտական հանձնաժողովում: Պատասխանվեց, որ հարցը քննարկվել է «Զարգացման ծրագրերի, ֆինանսաբյուջետային, տնտեսական հարցերի» մշտական հանձնաժողովում, քանի որ կրում է ֆինանսական բնույթ, սակայն հարցադրումը կընդունվի ի գիտություն. Այսուհետև, ըստ անհրաժեշտության, նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կներկայացվեն նաև «Իրավական հարցերի» մշտական հանձնաժողովի քննարկմանը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 08-Ն/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2022 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 336-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ լրացումները կատարելու համար՝

1) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբը լրացնել նոր 4-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի տեղակալ» (ծածկագիր՝ 2.2-4) կետով.

2) համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի 3-րդ ենթախումբը լրացնել նոր 21-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության և քաղաքացիների սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-21), 22-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և գնումներ բաժնի

գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-22), 23-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինարարության, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-23) և 24-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ» (ծածկագիր՝ 2.3-24) կետերով.
3) համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել նոր 33-րդ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ» (ծածկագիր՝ 3.1-33) կետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 09-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 197-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 144-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 38.1-րդ հոդվածների, և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 01/08.1/07691-2022 գրությունը (մուտք՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N Պ-1931) և Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 16-ի N -Ա որոշումը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 197-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Չեղյալ ճանաչել Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 17-ի «Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 08-ի N 05-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 144-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանն ուժի մեջ մտնելու պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և 13-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով Այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի հունվարի 23-ի եզրակացությունը և Արդարադատության նախարարի 2023 թվականի հունվարի 30-ի N 43-Ա հրամանը (մուտք՝ 2023 թվականի փետրվարի 06-ի N Պ-241), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյանի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը 2023 թվականի համար հաստատելու մասին» N 198-Ա որոշմամբ հաստատված հավելված 17-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի փետրվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Լսեցին

«ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԸ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՄՈՒՍ ԳՅՈՒՂԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱ ՍԻՄՈՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, «Վարչատարածքային

բաժանման մասին» օրենքի հավելված 2-ի 2.6 ցանկի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «գ», «դ», «զ» կետերի, հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 208-Ա որոշման, Աբովյան համայնքի ավագանին

որոշում է.

1. «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկը վերակազմակերպել և անվանափոխել Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն):
2. Հաստատել կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի:
3. Հաստատել կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված N 2-ի:
4. Սահմանել, որ՝

1) համայնքային սեփականություն հանդիսացող՝ «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի վերակազմակերպման պահին նրա տիրապետման տակ գտնվող գույքը՝ իր ամբողջ կազմով և արժեքով, բացառությամբ շենքերի, շինությունների, պատմամշակութային նշանակության ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, օգտագործման իրավունքով հանձնվում է Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, որպես իրավահաջորդի՝ համաձայն հավելված N 3-ի:

2) «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի տիրապետման շենքերը, շինությունները, Հողային օրենսգրքով սահմանված կարգով իրենց սպասարկման հողատարածքներով, պատմամշակութային նշանակության ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը՝ իր ամբողջ կազմով և արժեքով, Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվում են անհատույց օգտագործման իրավունքով՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Աբովյան համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

5. Հաստատել «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակույթային կենտրոն» հիմնարկի գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Աբովյան համայնքի «Արամուս գյուղի մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը՝ համաձայն հավելված N 4-ի:
6. Հանձնարարել կազմակերպության տնօրենին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել վերակազմակերպվող կազմակերպության և կանոնադրության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից, իսկ որոշման 3-րդ կետը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում կազմակերպության գրանցման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԾԱՏՈՒՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Աբովյան համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Տ. Գեղամյանը հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները դեմ են քվեարկելու այս նախագծին, քանի որ չեն մասնակցել ՏԱՊ-ի քննարկմանը և տեղյակ չեն, թե ինչպես է այն կազմվել: Ա. Ծատուրյանը պատասխանեց, որ խմբակցության ղեկավար Պ. Ցուգունյանը ներկա է եղել մշտական հանձնաժողովի նիստին:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13-Ա/

Լսեցին

ԱՐՍԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.05 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 54-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 193-Ն որոշման, հաշվի առնելով Արսեն Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հունվարի 20-ի N Ք-212) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 13-ի N 1/փ-12 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Արսեն Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2012 թվականի հուլիսի 24-ի N 24072012-07-0291 վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-002-0116-0276) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի 6/15 հասցեում գտնվող 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողերի (որը համաձայն Աբովյան քաղաքի գլխավոր հատակագծի հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս) գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հողամաս:

2. Արսեն Հակոբյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 55 000 (հիսունհինգ հազար) դրամ՝ որպես հողամասի գործառնական նշանակության փոփոխության վճար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արսեն Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՇԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-023-0193-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, 7-րդ հոդվածի 9-րդ և 15-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով Լուսինե Բաղալյանի հայտը (մուտք՝ 2023 թվականի հունվարի 12-ի N Ք-106), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Լուսինե Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի օգոստոսի 4-ի N 04082021-07-0118 վկայական) Աբովյան համայնքի Գեղաշեն գյուղում գտնվող 07-023-0193-0007 կադաստրային ծածկագրով 0.252 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության (վարելահող) հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ մրգերի և բանջարեղենի մշակման և պահածոյացման (չներառված ուրիշ խմբավորումներում) տնտեսություն կառուցելու նպատակով:
2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխված է համարվում պարզեցված կարգով միայն սեփականատիրոջ հայտի համաձայն համայնքի ավագանու կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և համայնքի ղեկավարի կողմից տվյալ հողամասի ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին սահմանված կարգով կայացված որոշումներն ուժի մեջ մտնելուց և հողամասի նկատմամբ փոխված նպատակային նշանակությամբ իրավունքները պետական գրանցում ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Բաղալյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Տ. Գեղամյանը խնդրեց մանրամասն ներկայացնել հարցը: Նշվեց, որ նմանատիպ հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխվում է գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ կառուցելու նպատակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.67373 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2012 թվականի հոկտեմբերի 20-ի N ԼՎ-076 լեռնահատկացման ակտը և օգտակար հանածոների արդյունահանման և /կամ/ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման N ՇԱԹՎ-29/076 թույլտվությունը, հաշվի առնելով «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի լիազորած անձ Առնակ Գալստյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի նոյեմբերի 7-ի N S-1337), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Թույլատրել համայնքի ղեկավարին առանց մրցույթի՝ վարձակալությամբ «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ընդերքօգտագործման նպատակով տրամադրել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի հունվարի 18-ի N 18012023-07-0127 վկայական) Արամուս գյուղի Տիգրանաձորի խճուղու 3-րդ նրբանցքի 5/15 հասցեում գտնվող 07-013-0159-0019 կադաստրային ծածկագրով 0.67373 հեկտար մակերեսով հողամասը:
2. Հողամասի վարձակալության ժամկետը սահմանել 13 (տասներեք) տարի՝ տարեկան 291 810 (երկու հարյուր իննսունմեկ հազար ութ հարյուր տասը) դրամ վարձավճարով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ա. Քոսակյանը նշեց, որ մշտական հանձնաժողովում հարցի քննարկման ժամանակ առաջարկվել է հողամասի վարձակալության տարեկան վարձավճարը սահմանել 2 % տոկոսադրույքով՝ տարեկան 291 810 (երկու հարյուր իննսունմեկ հազար ութ հարյուր տասը) դրամի փոխարեն 389 080 (երեք հարյուր ութսունինը հազար ութսուն) դրամ:
Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 16-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 8-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 78/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՎԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 3-րդ ենթակետերի և 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 192-Ն և N 193-Ն որոշումների և հիմք ընդունելով Սևակ Հովհաննիսյանի դիմումը (մուտք՝ 2023 թվականի հունվարի 13-ի N Ք-118), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.

1. Սևակ Ֆելիքսի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունիսի 13-ի N 13062022-07-0144 վկայական) Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի թիվ 78 հասցեում գտնվող 07-002-0025-0003 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 510.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի հոկտեմբերի 05-ի N 05102022-07-0081 վկայական) Աբովյան քաղաքի 8-րդ միկրոշրջանի 2-րդ թաղամասի թիվ 78/1 հասցեում գտնվող 07-002-0025-0226 կադաստրային ծածկագրով 50.9 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը, կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0025-0003 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Սևակ Ֆելիքսի Հովհաննիսյանին:

2. Սևակ Հովհաննիսյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 347 866 (երեք հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր վաթսունվեց) դրամ՝ ընդլայնվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար.

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Սևակ Հովհաննիսյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սևակ Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 17-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2023 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված բնակելի և հասարակական նշանակության կառույցները՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 18-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. 2023 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Նշվեց, որ մշտական հանձնաժողովի նիստում հարցի քննարկման ժամանակ առաջարկվել է նախագծի հավելվածով ներկայացված ցանկի 7-րդ տողը հանել ցանկից: Առաջարկվեց նաև լրացուցիչ քննարկում իրականացնել և վերանայել մի շարք հողամասերի մեկնարկային գները:
Պատասխանվեց, որ բոլոր հողամասերի մեկնարկային գները սահմանված են դրանց կադաստրային արժեքի 200%-ի չափով: Հարցը դրվեց քվեարկության առանց մեկնարկային գների փոփոխության, իսկ 7-րդ տողը հանվեց ցանկից:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 19-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՋԱՆԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Անվավեր ճանաչել՝
1) Աբովյան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին» N 160-Ա որոշման հավելվածով հաստատված 07-002-0065-0129, 07-002-0065-0127 և 07-002-0065-0128 կադաստրային ծածկագրերով հողամասերի մասով,
2) Աբովյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային կարգով

օտարելու մասին» N 119-Ա որոշման հավելվածով հաստատված 07-002-0065-0135 կադաստրային ծածկագրով հողամասի մասով,

3) Աբովյան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 24-ի «Աբովյանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն ու անշարժ գույքն աճուրդային կարգով օտարելու մասին» N 97-Ա որոշման հավելվածով հաստատված 07-002-0065-0111 կադաստրային ծածկագրով հողամասի մասով,

4) Աբովյան համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 07-ի «Աբովյանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը աճուրդային կարգով օտարելու մասին» N 37-Ա որոշման 1-ին մասի 3-րդ կետը,

